ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-2-3-Ա

ք. Երևան 27.02.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի փետրվարի 27-ի նիստում քննարկեց 2023 թվականի փետրվարի 2-ին արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ Birkenstock IP GmbH ընկերության (Burg Ockenfels 53545 Linz am Rhein (DE), DE) «BIRKENSTOCK TRADITION SINCE 1774» (IR1262787B) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը մերժվում է, քանի որ հայտատուն ներկայացրել է տարբերակիչ հատկություն չունեցող տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելու մասին պետական լիազոր մարմնի համար անընդունելի առարկություն:

Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառումներին, ցանկանում ենք նշել, որ դիսկլամացիան չի ազդում ապրանքային նշանի նկատմամբ դրա իրավատիրոջ բացառիկ իրավունքի վրա և «TRADITION SINCE 1774» արտահայտության նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից հրաժարվելով ենթադրվում է, որ ապրանքային նշանը պահպանվելու է իր ամբողջության մեջ, այսինքն ապրանքային նշանի գրանցումը վերը նշված արտահայտության դիսկլամացիայով չի սահմանափակում ոչ հայտատուի և ոչ էլ մյուս տնտեսվարողների իրավունքները:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ կետի դրույթները և հաշվի առնելով, որ հայտատուն չի հրաժարվում «TRADITION SINCE 1774» գրառման նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված Birkenstock IP GmbH ընկերության «BIRKENSTOCK TRADITION SINCE 1774» (IR1262787B) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ